



Շահագործման ու սպասարկման ձեռնարկ

Fusion Բեռի տեղափոխման սլաֆ

Z2E 1-UP (Բեռի
տեղափոխման սլաֆ)
Z2F 1-UP (Բեռի
տեղափոխման սլաֆ)
Z2H 1-UP (Բեռի
տեղափոխման սլաֆ)
Z2J 1-UP (Բեռի
տեղափոխման սլաֆ)

Լեզուն. բնօրինակ հրահանգներ



Սկանավորեք՝ բնօրինակ Cat® պահեստամասեր գտնելու
և գնելու, ինչպես նաև համապատասխան սպասարկային
տեղեկություններ ստանալու համար:



Անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկություններ

Արտադրանքի շահագործման, սպասարկման ու վերանորոգման ժամանակ տեղի ունեցող պատահարների մեծ մասի պատճառն անվտանգության տարրական կանոնների կամ նախազգուշական միջոցների անտեսումն է: Հաճախ պատահարներից կարելի է խուսափել՝ վաղօրոք ճանաչելով հավանական վտանգ պարունակող իրավիճակները: Անհրաժեշտ է զգոն լինել հավանական վտանգների նկատմամբ՝ հաշվի առնելով նաև անվտանգության վրա ազդող մարդկային գործոնները: Այդ գործառնությունները պատշաճ իրականացնելու համար տվյալ անձը պետք է ունենա նաև անհրաժեշտ պատրաստվածություն, հմտություններ ու գործիքներ:

Այս արտադրանքի սխալ շահագործումը, յուղումը, սպասարկումը կամ վերանորոգումը վտանգավոր է և կարող է հանգեցնել մարմնական վնասվածքի կամ մահվան:

Ձեռնպահ մնացեք մեքենայի գործարկումից և ցանկացած յուղման, սպասարկման կամ վերանորոգման աշխատանքներից, քանի դեռ չեք հավաստիացել, որ իրավասու եք այդ անելու, և որ ընթերցել ու յուրացրել եք շահագործման, յուղման, սպասարկման ու վերանորոգման մասին տեղեկությունները:

Այս ձեռնարկում և արտադրանքի վրա առկա են անվտանգության ցուցումներ ու նախազգուշացումներ: Վտանգի մասին նախազգուշացումներն անտեսելը կարող է հանգեցնել Ձեզ կամ այլ անձանց մարմնական վնասվածքի հասցման կամ մահվան:

Վտանգները նշված են «Վտանգի մասին զգուշացման խորհրդանիշով», որին հետևում է «Նշանաբառը», օրինակ՝ «DANGER» («ՎՏԱՆԳ»), «WARNING» («ՉԳՈՒՇԱՑՈՒՄ») կամ «CAUTION» («ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ»): Վտանգի մասին զգուշացնող «WARNING» («ՉԳՈՒՇԱՑՈՒՄ») պիտակը ցուցադրված է ստորև:



Այս զգուշացնող նշանի իմաստը հետևյալն է.

Ուշադրություն: Չզուշացե՛ք: Խնդիրը Ձեր անվտանգությունն է:

Չզուշացման տակ առկա է լինում վտանգը պարզաբանող ուղերձ, որը կարող է լինել գրավոր կամ պատկերային:

Արտադրանքի վնասման հավանական պատճառ հանդիսացող գործողությունների սահմանափակ ցանկը արտադրանքի վրա և այս հրապարակման մեջ նույնականացված է “NOTICE” (ԾԱՆՈՒՑՈՒՄ) պիտակով:

Caterpillar -ն անկարող է կանխագուշակել հավանական վտանգ պարունակող բոլոր հնարավոր հանգամանքները: Հետևաբար, բոլոր նախազգուշացումները չեն, որ ընդգրկված են այս հրապարակման մեջ և արտադրանքի վրա: Այս արտադրանքը չի կարելի օգտագործել այս ձեռնարկում նկարագրվածից բացի որևէ այլ եղանակով, եթե վստահ չեք, որ հաշվի եք առել անվտանգության այն բոլոր կանոնները և նախազգուշական միջոցները, որոնք վերաբերում են համապատասխան վայրում արտադրանքի շահագործմանը, այդ թվում տվյալ տեղանքին առնչվող կանոններն ու նախազգուշական միջոցները: Caterpillar -ի կողմից հատուկ չնախատեսված գործիք, ընթացակարգ կամ շահագործման եղանակ կիրառելու դեպքում նախ հավաստիացեք, որ դա անվտանգ կլինի Ձեզ և այլոց համար: Անհրաժեշտ է հավաստիանալ, որ Դուք իրավասու եք կատարելու տվյալ աշխատանքը, և որ արտադրանքը չի վնասվի կամ դրա շահագործումը վտանգավոր չի դառնա Ձեր նախատեսած շահագործման, յուղման, սպասարկման կամ վերանորոգման ընթացակարգի արդյունքում:

Այս հրապարակման մեջ առկա տեղեկությունները, բնութագրերն ու պատկերները հիմնված են այն տեղեկությունների վրա, որոնք մատչելի են եղել դրա ստեղծման պահին: Բնութագրերը, պատուհի մոմենտները, ճնշումները, չափերը, կարգավորումները, պատկերները և այլ տվյալներ կարող են փոփոխվել ցանկացած ժամանակ: Այդ փոփոխությունները կարող են ազդել արտադրանքի սպասարկման վրա: Նախքան ցանկացած աշխատանք սկսելը ստացեք ամբողջական ու առավել արդիական տեղեկություններ: Cat -ի ներկայացուցիչները տիրապետում են հնարավոր ամենաարդիական տեղեկություններին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Այս արտադրանքի պահեստամասերի կարիք առաջանալու դեպքում Caterpillar-ը խորհուրդ է տալիս օգտագործել բնօրինակ Caterpillar® պահեստամասեր:

Այլ մասերը կարող են չհամապատասխանել բնօրինակ սարքավորումների որոշ բնութագրերին:

Պահեստամասերի տեղադրման դեպքում մեքենայի սեփականատերը/օգտվողը պետք է հավաստիանա, որ մեքենան շարունակում է համապատասխանել բոլոր կիրառելի պահանջներին :

Միացյալ Նահանգներում արտանետումների վերահսկման սարքավորումների ու համակարգերի սպասարկումը, փոխարինումը կամ վերանորոգումը կարող է իրականացվել ցանկացած վերանորոգման կետի կամ անհատի կողմից՝ սեփականատիրոջ հայեցողությամբ: